Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՀԽ-2 (5)

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2018թ. հուլիսի 20

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (այսուհետ՝ Նախարար), խորհրդի նախագահ Մանե Թանդիլյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Սուսաննա Թադևոսյան	«Հույսի կամուրջ» ՀԿ
Թամարա Աբրահամյան	«Արազա» ԲՀԿ
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ ՀԿ
Միրա Անտոնյան	«Երեխաների պաշտպանության ցանց ոչ առևտրային» ԻԱՄ
Արթուր Սարգսյան	«Աշխատանքի իրավունքի պաշտպանի գրասենյակ» ՀԿ
Հակոբ Բալասյան	«Հայաստանի համայնքների միություն» ԻԱՄ
Շողինե Սողոմոնյան	«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
Տիգրան Պետրոսյան	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
Սպարտակ Սարգսյան	«ՍՕՍ մանկական գյուղեր» ԲՀԿ
Աիդա Մուրադյան	«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» ԲԿ
Աննա Եղիազարյան	«Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ
Գրիգորի Գրիգորյանց	«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչություն
Արայիկ Հայրապետյան	Ֆիզիկական անձ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն)

Մասնակցում և հրավիրված էին՝

Սմբատ Սաիյան	Նախարարի տեղակալ
Արման Ուդումյան	Նախարարի տեղակալ
Զարուհի Բաթոյան	Նախարարի տեղակալ
Արայիկ Պետրոսյան	Նախարարի խորհրդական
Մագդա Արսենյան	Նախարարի օգնական

Գրանց/35260-18 31 07 18թ

Արթուր Կեսոյան	Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ
Աստղիկ Մինասյան	Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ
Ժորա Սարգսյան	Նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Անահիտ Գալստյան	Նախարարության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչության պետ
Արամ Պետրոսյան	Նախարարության աշխատակազմի իրավական ապահովման բաժնի պետ
Վանիկ Բաբաջանյան	Նախարարության աշխատակազմի ժողովրդագրության բաժնի պետ
Մանե Մադոյան	Նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Արտակ Հարությունյան	Նախարարության սոցիալական աջակցության վարչության մեթոդական բաժնի պետ
Անուշ Բաղալյան	Նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Գայանե Մանուկյան	Նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Անի Հովհաննիսյան	«Արդարության սերունդ» ՀԿ
Կարինե Հարությունյան	«Գալա» հ/ը գործադիր տնօրեն
Սյուզան Հակոբյան	«ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ
Անահիտ Սահակյան	ԵՊՀ-ի Սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ

Բացակայում էին՝
Խորհրդի անդամներ

Լալա Տեր-Ղազարյան	«Պանորամա Էյ եմ» ՍՊԸ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
Մարինե Համբարձումյան	«Հայ օգնության միություն» ԲՀԿ
Նաիրա Առաքելյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ
Աննա Մնացականյան	ֆիզիկական անձ
Սյուզաննա Բաղդոյան	ֆիզիկական անձ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **«Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց հաշվառման, երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանիքում կազմակերպելու կարգի և խնամատարության պայմանագրի ձևի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացում:**
   (Զեկուցող՝ «Երեխաների պաշտպանության ցանց ոչ առևտրային» ԻԱՄ Միրա Անտոնյան)

2. **«Սոցիալական աշխատանքի մասին» և ««Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում:**
   (Զեկուցող՝ ԱՍՀՆ սոցիալական աջակցության վարչության պետ Աստղիկ Մինասյան)

3. **«Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում:**
   (Զեկուցող՝ ԱՍՀՆ ժողովրդագրության բաժնի պետ Վանիկ Բաբաջանյան)

4. **Նախարարին կից հասարակական խորհրդի առցանց հեռարձակման ձևաչափի ներկայացում:**
   («ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի ծրագրի համակարգող Սյուզան Հակոբյան)

5. **Այլ հարցեր**

Մինչ օրակարգի հարցերին անդրադառնալը՝ Նախագահը ողջունել է հասարակական խորհրդի անդամներին՝ նշելով, որ օրակարգը ձևավորվել է հիմքում ունենալով նախարարության առջև դրված առաջնահերթությունները և անհրաժեշտ է նպաստել ոլորտի խնդիրների բարձրացմանը, ակտիվացնել բոլոր ծրագրերը և դրանց արդյունավետ լուծման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Նախագահը կարևորել է ձևավորված հարթակի շրջանակներում յուրաքանչյուր անդամի առավել ակտիվ մասնակցությունը նմանատիպ քննարկումներին, որպեսզի այն տեսլականը, որն առկա է սոցիալական պաշտպանության ոլորտում, համագործակցության արդյունքում դառնա էլ ավելի իրատեսական: Միաժամանակ, կարևորելով քննարկումների առավել թափանցիկ, քննադատող, առարկայական և ինտերակտիվ լինելու հանգամանքը՝ ընդգծել է, որ առողջ քննադատության և համատեղ աշխատանքի արդյունքում կընդունվեն այնպիսի որոշումներ և օրենքներ, որոնք կնպաստեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կենսապայմանների բարելավմանը՝ մասնավորապես մանկատներից երեխաներին ընտանիք վերադարձնելու և բազմազավակ ընտանիքներին աջակցելու գործընթացները, պետության համար առաջնային համարվող ժողովրդագրական խնդիրների լուծումը և այլն:

Նախքան Խորհրդի նիստը «Արազա» ԲՀԿ-ի նախագահ Թամարա Աբրահամյանը առաջարկել է օրակարգի «Այլ հարցերում» անդրադառնալ Խորհրդի ռոտացիոն կարգի հետ կապված խնդիրներին, մասնավորապես հաշվետվությունների մշակման ու ներկայացման ձևաչափին, բովանդակությանը, կազմակերպման գործընթացներին և ընթացակարգին: Միաժամանակ ընդգծել է, որ նախկինում ևս վերոնշյալ առաջարկությունը ներկայացվել է, սակայն լուծում չի ստացել:

Նախագահն առաջարկել է գործընկերներին կարծիքներ ստանալու, առաջարկություններ ներկայացնելու և փոխանցելու նպատակով օգտագործել օնլայն հարթակը, որից հետո ավելի առարկայական կդառնա վերոնշյալ հարցի քննարկումը:

Այնուհետև, Նախագահ Մանե Թանդիլյանն անդրադարձել է նիստի օրակարգին, որի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ չեն ներկայացվել և այն հաստատվել է միաձայն:

Օրակարգի 1-ին հարց.
«Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց հաշվառման, երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանիքում կազմակերպելու կարգի և խնամատարության պայմանագրի ձևի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում:

Օրակարգի առաջին հարցի շրջանակներում՝ «Երեխաների պաշտպանության ցանց ոչ առևտրային» ԻԱՄ-ի գործադիր տնօրեն **Միրա Անտոնյանը** անդրադարձել է Նախագծի հիմնական դրույթներին ու չափանիշներին, որոնցով կարգավորվում են խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց իրավունքներն ու պարտականությունները, մասնավորապես, խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց հաշվառման, ուսուցման, որակավորման, ընտրության, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, ինչպես նաև խնամատարության հետ կապված այլ հարաբերություններ: Ներկայացվել է նաև Հայաստանում ներդրված խնամատարության ինստիտուտի զարգացման փուլերի, իրականացված աշխատանքների, թերությունների ու բացթողումների մասին: Նա նշել է, որ ըստ գործող կարգի, խնամատարության գործընթացը սկսվում է խնամատարների թեկնածու դառնալու ընտանիքի հաշվառումից, հետևաբար անհրաժեշտ է նախքան հաշվառելը նախատեսել իրազեկման գործընթաց, քանի որ խնամատարությունն որպես երևույթ սովորական, առօրյա գործընթաց չէ և հանրությունը բավականաչափ տեղեկացված չէ:

Այնուհետև, մանրամասն նկարագրել է խնամատար ընտանիքների գնահատման գործընթացը՝ նշելով, որ գնահատումն իրականացնում է լիազորված պետական մարմինը՝ սահմանված կարգով և մեթոդաբանությամբ: Բանախոսն ընդգծել է, որ վերոնշյալ գործընթացում առկա են բացթողումներ, մասնավորապես այն իրողությունը. երբ սոցիալական աշխատողը մեկ այցի ընթացքում իրականացնում է գնահատման գործընթաց. այսինքն՝ անձը դիմում է մարզպետարան (Երևանի քաղաքապետարան), որից հետո դիմումը մակագրվում է մարզպետարանի (Երևանի քաղաքապետարան) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության և սոցիալական ծառայության բաժին, որից հետո դեպք վարողը երեք օրվա ընթացքում կատարում է տնային այցելություն, բնակարանային պայմանների ուսումնասիրություն, այնուհետև եզրակացությունը ներկայացնում է երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին: Վերոնշյալ

պարագայում թե՛ ժամկետը, թե՛ պահանջը չի արտացոլում խնամատարության բուն էությունը և ըստ նրա գնահատման գործընթացը պետք է բաղկացած լինի երեք փուլից.

- մոտիվացիայի նախագնահատում,
- փաստաթղթերի ստուգում ինքնաշխատ եղանակով,
- ընտանիքի անդամների հետ հարցազրույց, ընտանիքի մնացած անդամների մոտիվացիայի պարզում, երեխա լինելու պարագայում ծառայությունների հասանելիության հնարավորության պարզում, նախքան խնամատար ընտանիք տեղափոխվելը և տեղափոխվելուց հետո երեխային մատուցած ծառայությունների համաչափության պահպանում:

Բանախոսը հավելել է նաև, որ գնահատման գործընթացն ավելի արդյունավետ և հանգամանալից իրականացնելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել առնվազն երկշաբաթյա ժամկետ:

Ներկայացված Նախագծի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից հնչել են տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

Խորհրդի Նախագահն անդրադարձել է գնահատման ժամկետի երկարաձգման պարագայում առկա հնարավոր ռիսկերին: Միրա Անտոնյանը Նախագահի հարցին ի պատասխան նշել է, որ հնարավոր ռիսկեր առկա չեն և, որևէ գործընթաց ժամկետի երկարաձգման պարագայում չի խաթարվի:

«Արդարության սերունդ» ՀԿ-ի ներկայացուցիչ Անի Հովհաննիսյանի կողմից հնչել է երկարաժամկետ խնամատարության հարցը, որին ի պատասխան տիկին Անտոնյանը նշել է, որ Նախագծի 36-րդ կետից սկսած դիտարկվում են նաև ճգնաժամային, մասնագիտացված, հատուկ կարիքներով երեխաների խնամքի համար խնամատար ծնողների վերապատրաստմանն առաջադրվող պահանջները: Միաժամանակ հավելել, որ եթե տարբերակում ենք ճգնաժամային կամ մասնագիտացված, ապա նրանց առաջադրվող վերապատրաստման պահանջները նույնպես պետք է լինեն տարբերակված: Նշել է նաև, որ կարգում ներառված է այն ներածական վերապատրաստման դասընթացը, որը նախատեսված է յուրաքանչյուր խնամատար ծնողի համար: Այնուհետև հավելել, որ հատուկ կարիքներով երեխաների խնամքով զբաղվող անձանց պարագայում վերջիններիս խնամքի առանձնահատկություններն ուսումնասիրելու նպատակով Նախագծով նախատեսվում են լրացուցիչ ուսուցման դասընթացներ:

Անի Հովհաննիսյանի կողմից անդրադարձ է կատարվել նաև այն խնդրին, որ վերոնշյալ Նախագծով 18 տարին լրացած ֆիզիկական անձը կարող է դառնալ ծնող, հետևաբար սեռական փոքրամասության ներկայացուցիչները նույնպես կարող են լինել խնամատար ծնող, որը մտահոգությունների տեղիք կարող է տալ: Տիկին Անտոնյանը պարզաբանել է, որ «անձ» ասելով նկատի ունեն այն հանգամանքը, որ պայմանագիրը կնքվում է ընտանիքի չափահաս անդամներից որևէ մեկի հետ՝ կամ ամուսնու, կամ կնոջ: Սակայն եթե անձ է, ուրեմն փոքրամասնություն է, ապա այդ հարցադրումը անհասկանալի է:

Անի Հովհաննիսյանն ևս մեկ հարցադրում է ընդգծել. Նախագծում նշված է «անձ», չնայած ճիշտ կլիներ, որ այդ բառի փոխարեն Նախագծում օգտագործվեր «ընտանիք» բառը: Հարցադրմանն ի պատասխան տիկին Անտոնյանը նշել է, որ այդ լրացումներն արդեն իսկ առաջարկել է, այսինքն՝ ոչ միայն դիմողը ծնողն է, այլ ընտանիքը, ընտանիքի անդամները, բայց ի վերջո իրավական տեսակետից պայմանագիրը կնքվում է մեկ անձի հետ:

Միաժամանակ, առաջարկել է պայմանագրին նաև կցել ընտանիքի անդամների համաձայնությունները:

«Գալա» հ/ը գործադիր տնօրեն Կարինե Հարությունյանի կողմից հնչած հարցը վերաբերել է միայնակ անձի հետ պայմանագիր կնքելուն, որին ի պատասխան զեկուցողը նշել է, որ այն օրենքով սահմանված է, որ խնամատար անձ կարող է դառնալ 18 տարին լրացած անձը, այսինքն օրենքը վերոնշյալ պարագայում սահմանափակումներ չի նախատեսում:

Խորհրդի անդամ Արայիկ Հայրապետյանը ի հավելումն ներկայացվածի՝ նշել է, որ անհրաժեշտ է դիտարկել հետևյալ փաստերը. «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի» (Այսուհետ՝ Օրենսգիրք) 138.1 հոդվածում նշված են այն բոլոր հիմքերը, որոնց առկայության դեպքում անձը չի կարող հանդիսանալ խնամատար ծնող, բնականաբար, կարգի նախագծում արտացոլվել են այն հիմնական պահանջները, որոնք պարտադրված են Օրենսգրքով, այսինքն՝ լրացուցիչ պահանջներ չեն դրվել այն անձանց առջև, ովքեր ցանկանում եմ դառնալ խնամատար ծնող: Միաժամանակ նշել, որ երեխայի խնամատար ընտանիք տեղափոխելու գործընթացը բավականին բարդ է և պատասխանատու և այդ պարագայում մարզպետարանի համապատասխան բաժինը, որը մի շարք հանգամանքների և վերլուծություններից հետո ընդունում է դրական կամ բացասական եզրակացություն, առաջնայինը դիտարկում է երեխայի լավագույն շահը: Իսկ «երեխայի լավագույն շահ» ասելով՝ նախագծում հաշվի են առնվում այն բոլոր ասպեկտները, որոնք էական նշանակություն կարող են ունենալ երեխային կոնկրետ ընտանիքին հանձնելու դեպքում: Իսկ տիկին Անտոնյանի կողմից նշված եռօրյա ժամկետի երկարաձգման առաջարկին ի պատասխան՝ Արայիկ Հայրապետյանն իրազեկել է, որ նախագծի 1-ին հավելվածի 7-րդ կետում հստակ նշված է, որ գործակալության սոցիալական աշխատանքի մասնագետը տասնօրյա ժամկետում իրականացնում է տնային այցելություն:

Վերը նշված հարցադրմանն ի պատասխան **նախարարի խորհրդական Արայիկ Պետրոսյանը** ընդգծել է, որ եռօրյա ժամկետը վերաբերում է Սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից ընտանիքի կենսապայմանների ուսումնասիրության գործընթացին: Այնուհետ, Արայիկ Հայրապետյանը մանրամասնել է, որ տնային այցելությունն իրականացվում է 10-օրյա ժամկետում, այցելության իրականացումից հետո եռօրյա ժամկետում գործակալության սոցիալական աշխատանքի մասնագետը կազմում և գործակալության պետին է ներկայացնում խնամատար ծնող դառնալ ցանկացող անձի կենսապայմանների ուսումնասիրության մասին եզրակացություն: Այդ առումով վերոնշյալ ժամկետը համարվում է տրամաբանական:

Խորհրդի Նախագահը ողջունել է պարոն Հայրապետյանի կողմից վերոնշյալ հարցին տրված սպառիչ պատասխանը և առաջարկել տիկին Անտոնյանին համապատասխան առաջարկությունները ներկայացնել նախագծի ամբողջական ներկայացումից հետո:

Այնուհետև տիկին Անտոնյանը, շարունակել է նախագծի ներկայացումը, նշելով՝ որ գնահատման գործընթացից հետո նախատեսվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքի և դաստիարակության ժամանակավոր կազմակերպման համար անհրաժեշտ, խնամատար ծնողի համար պահանջվող համապատասխան գիտելիքների և գործնական հմտությունների ձեռքբերման ու կատարելագործման

նպատակով վերապատրաստման գործընթաց, սակայն վերոնշալ գործընթացում առկա է հակասություն դասընթացի տևողության հետ կապված, այսինքն՝ Նախագծի 1-ին հավելվածի 20-րդ կետում նշված է իննսունվեց ակադեմիական ժամ, իսկ 2-րդ հավելվածի 7-րդ կետում՝ երեսունվեց ակադեմիական ժամ: Միրա Անտոնյանը համառոտ նկարագրել է նաև նախագծով նախատեսված համադրման, մոնիթորինգի և մշտադիտարկման հետագա գործընթացները:

Ի հավելումն ներկայացվածի Արայիկ Հայրապետյանը իրազեկել է, որ Նախագծի 1-ին հավելվածի 20-րդ կետում նշված իննսունվեց ակադեմիական ժամը վերաբերում է խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ուսուցման և որակավորման դասընթացներին, իսկ 2-րդ հավելվածի 7-րդ կետում նշված է երեսունվեց ակադեմիական ժամը՝ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց վերապատրաստման դասընթացներին: Վերոնշյալ պարագայում խոսքը տարբեր հասկացությունների մասին է:

Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ **Անահիտ Սահակյանը,** կարևորելով խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց վերապատրաստման դասընթացներին մասնակցելու սեփական փորձը, առաջնային է համարել ոչ թե «**ընտանիքի համար ընտրել երեխա, այլ երեխայի համար ընտրել ընտանիք**» սկզբունքը:

Նախարարի խորհրդական Արայիկ Պետրոսյանը հավելել է, որ նախագծում բովանդակային առումով «և երեխայի համար ընտրել ընտանիք, և ընտանիքի համար ընտրել երեխա» գաղափարի ներդաշնակությունն ապահովված է: Խորհրդի Նախագահը հավաստել է, որ «Խնամատար ընտանիքի համար երեխա» տարբերակը այդքան էլ ընդունելի չէ, որովհետև Նախարարության առաջնային խնդիրը երեխաներին ընտանիք վերադարձնելու գաղափարն է:

Խորհրդի անդամ Արայիկ Հայրապետյանը Նախագծի կետերի վերաբերյալ ներկայացրել է մի շարք առաջարկություններ.

1. Նախագծի 1-ին հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի գ պարբերությունում հղում կատարել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 138.1 հոդվածի 1-ին մասի 1-4 կետերին, ընդ որում վերոնշյալ առաջարկությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ նախորդ տարբերակում հղումը կատարված էր 1-4 կետերին, նոր տարբերակում հղում է արված 1-9-րդ կետերին: Այսինքն՝ գործող խնամատար կարգով, ինչպես նաև նախկինում գործող ՀՀ ընտանեկան օրենսգրքով նույնպես կային պահանջներ, որի դեպքում անձը չէր կարող դառնալ խնամատար ծնող, բայց գործող կարգով ոչ մի մեխանիզմ ներառված չէ, բացառությամբ բժշկական տեղեկանք պահանջելուց, որով լիազոր մարմինը կամ մարզպետարանը կարող էր ստուգել, թե արդյոք տվյալ անձը համապատասխանում է օրենսգրքով սահմանված պահանջներին և որի առկայության դեպքում կարող է դառնալ խնամատար ծնող:
2. Նախագծի 1-ին հավելվածի 21-րդ կետում հանվել է «Այլ անձանց նվազագույն թիվը», որի պարագայում պետք է ուսուցման դասընթաց անցկացվեր: Միաժամանակ նշել է, որ յուրաքանչյուր ուսուցման դասընթաց բավականաչափ ծախսեր է նախատեսում: Նույնիսկ, եթե հաշվառված լինի մեկ անձ, ապա այդ անձի համար պետք է սահմանվի իննսունվեց ակադեմիական ժամ ուսուցում, իսկ Նախագծի նախկին տարբերակում առնվազն տաս անձանց առկայության դեպքում էր դասընթացն եռամսյակը մեկ իրականացվում:

3. Նախագծի 1-ին հավելվածի 41-րդ կետի 2-րդ նախադասությունը խմբագրման կարիք ունի, որովհետև բովանդակային առումով նշված է, որ «հաշվի է առնվել երեխայի կարծիքը՝ նրա տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, ապա կազմվում է ընտրված երեխային որակավորված անձի խնամատարությանը հանձնելու մասին բացասական եզրակացություն», այսինքն՝ վերոնշյալ նախադասությունը այնպես է ձևակերպված, որ երեխայի կարծիքը հաշվի առնելու պարագայում տրվում է բացասական եզրակացություն, որն անընդունելի է:

«Հույսի կամուրջ» ՀԿ նախագահ Սուսաննա Թադևոսյանը մտահոգություն է հայտնել, թե արդյոք Նախագծում գնահատվել է խնամատար ընտանիքի արդեն կայացած երկարամյա փորձը, վեր են հանվել դրական և բացասական գործոնները և արդյոք այդ ընտանիքները կներգրավվեն նմանատիպ քննարկումներին:

Հարցին ի պատասխան պարոն Պետրոսյանը ընդգծել է, որ խնամատար ընտանիքի ինստիտուտը համարվում է Նախարարության շուրջօրյա հաստատությունների այլընտրանքային ծառայություններից մեկը: Միաժամանակ հավելել, որ յուրաքանչյուր ընտանիքի մասով նախագծում առկա է ընտանիքի ուսումնասիրման, գնահատման և մոնիթորինգի գործընթաց: Այսինքն՝ յուրաքանչյուր ընտանիք որոշակի պարբերականությամբ գնահատվում է: Տիկին Թադևոսյանի հարցին ի պատասխան Միրա Անտոնյանն ևս նշել է, որ նոր Նախագծում մեծ մասամբ հաշվի է առնվել խնամատար ընտանիքի նախկին փորձը: Հավելել է նաև, որ 18 տարին լրացած անձի՝ խնամատար ծնող դառնալու հանգամանքը իրատեսական չի համարում:

Բարձրացված խնդրին անդրադառնալով՝ Արայիկ Հայրապետյանն ընդգծել է, որ 18 տարին լրացած անձը չի կարող լինել 14 տարեկան երեխայի խնամատար ծնող: Օրենսգրքով հստակ ամրագրված է, որ ծնողի և երեխայի տարիքային տարբերությունն առնվազն պետք է լինի 18 տարի:

Այնուհետև, խորհրդի անդամ Սուսաննա Թադևոսյանը «երեխայի լավագույն շահ հասկացությանը» անդրադառնալով՝ ընդգծել է, որ երեխայի շահը երեխայի իրավունքների լիակատար պաշտպանությունն ու իրացումն է, որը ներկա պահին լիարժեք չի իրականացվում և այն պետք է սահմանվի օրենքով: Անդրադառնալով Նախագծի հավելված 1-ի 3-րդ կետի 4-րդ ենթակետում նշված Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններին՝ նշել է, որ վերոնշյալ ցանկը շատ վիճահարույց է, քանի որ նույն ախտորոշմամբ երկու անձինք բոլորովին տարբեր են և ներառված հիվանդություններով դիմողի հիվանդ չլինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ դիմումն ընդունելու պարագայում:

Հարցին ի պատասխան Արայիկ Հայրապետյանը նշել է, որ խոսքը խրոնիկ հիվանդությունների ցանկին է վերաբերում:

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ ՀԿ-ի ներկայացուցիչ Մարիետա Թեմուրյանը նշել է, որ համամիտ է Սուսաննա Թադևոսյանի կողմից հիվանդությունների ցանկի վերաբերյալ բարձրացված հարցին, միաժամանակ հանդիպման ընթացքում ներկայացված որոշ կարծիքներին անդրադառնալով՝ կարևորել է խնամատար ընտանիքների ուսուցման գործընթացում սեռական ուսուցման հետ կապված

գիտելիքների ներառման հանգամանքը: Տիկին Անտոնյանը իրազեկել է, որ խնամատար ընտանիքների ուսուցման գործընթացում այն ներառված է:

Խորհրդի անդամ Սուսաննա Թադևոսյանը անդրադարձել է նաև սոցիալական աշխատողի գնահատման պարագայում սուբյեկտիվիզի բացառմանը, որին ի պատասխան պարոն Պետրոսյանը նշել է, որ խնամատար ընտանիքի գնահատման դեպքում սուբյեկտիվիզմ միշտ առկա է: Իսկ Նախագահն հավելել է, որ սուբյեկտիվիզմը ռիսկ է, որը լինում է բարձր, միջին, ընդունելի և անընդունելի:

Հրավիրված անձ Կարինե Հարությունյանը մտահոգություն է հայտնել, որ ներկա պահին սոցիալական աշխատողների ինստիտուտը կայացած չէ, այսինքն՝ մենք չունենք չափանիշներ, որ անձին կարելի է համարել սոցիալական աշխատող և ըստ այդմ գնահատել: Միաժամանակ նշել է, որ վերապահումով է մոտենում գնահատման թե արդյունքներին, թե մեթոդաբանությանը: Անհրաժեշտ է հստակ ամրագրել գնահատելու իրավունք ունեցող անձի չափորոշիչները: Հավելել է նաև, որ սուբյեկտիվիզմի գործոնը շատ բարձր է, իսկ Հայաստանում՝ հատկապես մարզերում գոյություն ունի «փակ ընտանիք» մեխանիզմը:

Հարցին ի պատասխան Միրա Անտոնյանը նշել է, որ մշակվել է խնամատար ընտանիքի ինստիտուտի համար ստանդարտներ, այսինքն՝ խնամատար ընտանիքներում ծառայությունների մատուցման նվազագույն ստանդարտներ, թեկնածուին առաջադրվող նվազագույն պահանջներ, մոնիթորինգի նվազագույն պահանջներ, առաջադրվել է երեխայի տեղավորման պլան և պլանի վերանայման պայմաններ: Ավելացրել է, որ առաջարկները երկու տարի առաջ ներկայացվել են նախարարություն, վերջերս էլ վերանայվել են և համապատասխան լրացումներ կատարվել: Այնուհետև, զեկուցողն առաջարկել է վերը նշված առաջարկները կցել Նախագծին և տալ համապատասխան հղումներ, իրականացնել վերոնշյալ ստանդարտներն իրականացնող սոցիալական աշխատողների ուսուցման դասընթացներ:

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» ԲԿ-ի ներկայացուցիչ Աիդա Մուրադյանը նշել է, որ նիստի ընթացքում քննարկվել է խմանատար ծնողի նվազագույն տարիքային շեմը, սակայն իր կարծիքով անհրաժեշտ է սահմանել նաև խմանատար ծնողի առավելագույն տարիքային շեմը: Նախագահն ի պատասխան հավելել է, որ Նախագիծը դեռ շրջանառության մեջ է և տարիքի առավագույն շեմը կվերանայվի:

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչության անդամ Գրիգորի Գրիգորյանցն էլ անդրադարձել է կենսաբանական ծնողի համաձայնեցման գործընթացում առկա խնդիրներին, մասնագիտացված խնամատարության համար բարձրացված ֆինանսական չափաքանակներին և ընդգծել, որ Նախագծում առաջարկվում է 25-30 տոկոս, սակայն այս կատեգորիայի վիճահարույց հարցը հաշմանդամություն ունեցող երեխաներն են, որոնց որդեգրման և մասնագիտացված խնամատարության տեսանկյունից առկա է խնդիր և առաջարկել է առնվազն 50 կամ 80 տոկոս բարձրացնել ֆինանսական չափաքանակները, որոնք լրացուցիչ և կարևոր խթան կհանդիսանան խնամատարության գործընթացներում: Հարցադրմանն ի պատասխան նախարարի խորհրդական Արայիկ Պետրոսյանը նշել է, որ ֆինանսական չափաքանակները սահմանվել են հաշվի առնելով նախարարության սոցիալական պաշտպանության շուրջօրյա հաստատություններում (ընդհանուր և հատուկ տիպի) խնամվող երեխաների խնամքի մեկ օրվա ֆինանսական չափերի տարբերակումը:

Ամփոփելով օրակարգի առաջին հարցի ներկայացումը Միրա Անտոնյանը նշել է, որ քննարկման արդյունքում որոշակի հարցեր արդեն իսկ ստացել են իրենց տրամաբանական լուծումները: Անդրադարձել է նաև վերոնշյալ գործընթացում առկա բացթողումներին և թերացումներին: Միաժամանակ նշել, որ համադրման գործընթացը շատ մակերեսային է նկարագրված Նախագծում, առաջարկել է կամ Նախագծում մանրամասն նկարագրել, կամ համապատասխան ուղեցույց կցել: Հավելել է նաև, որ ամենախնդրահարույց հարցը վերաբերում է երեխայի խնամակալության հանձնաժողովին այսինքն՝ հաշվառում և գնահատում է երեխայի իրավունքների պաշտպանության բաժինը, տնային այցելություն է իրականացնում սոցիալական ծառայության սոցիալական աշխատողը, սակայն համադրումը իրականացնում է խնամակալության հանձնաժողովը:

Ամփոփմանն ի հավելում խորհրդի անդամ Արայիկ Հայրապետյանը մանրամասնել է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինը մասնակցում է հանդիպման կազմակերպմանը, իսկ համադրումն իրականացնում է մարզպետարանի համապատասխան բաժինը:

Օրակարգի 1-ին հարցի ներկայացումից հետո խորհրդի Նահագահ Մանե Թանդիլյանը կարևորել է վերոնշյալ քննարկումների ձևաչափը՝ միաժամանակ ընդգծել, որ երկակի մեկնաբանությունների տեղիք տվող հարցերի պարագայում անհրաժեշտ է համապատասխան առաջարկությունների հիման վրա հստակեցնել և քննարկումների արդյունքում գտնել հարցի վերջնական լուծման տարբերակներ:

Օրակարգի 2-րդ հարց.

«Սոցիալական աշխատանքի մասին» և ««Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում:

Օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում նախարարության սոցիալական աջակցության վարչության պետ Աստղիկ Մինասյանը ներկայացրել է «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ նշելով, որ այն նախարարության նախաձեռնությունը չէ, այլ տիպիկ դեմոկրատական սկզբունքով ստեղծվել է Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիայի կողմից: Միաժամանակ հավելել, որ բազմաթիվ անգամ կազմակերպվել են Նախագծի քննարկումներ:

Առաջին քննարկումը տեղի է ունեցել 2016թ. նոյեմբերին ԵՊՀ-ի կենտրոնական դահլիճում, Սոցիալական աշխատողի մասնագիտական տոնի (նոյեմբերի 4) կապակցությամբ: Երկրորդ հանրային քննարկումը տեղի է ունեցել սոցիալական գործընկերության հանրապետական եռակողմ հանձնաժողովի նիստում և օրենքի նախագիծը լրամշակված ներկայացվել է ՀՀ կառավարություն: 2017թ. Նախագիծը դարձել է նախարարության միջոցառումների ծրագրում որպես առանձին միջոցառում: ՀՀ Ազգային ժողովի նախագահի և պատգամավորների մասնակցությամբ կայացել է Նախագծի լայնամասշտաբ քննարկում: Զեկուցողը նշել է, որ մշակված օրենսդրական ակտով կարգավորվում են սոցիալական աշխատանք հասկացությունը, սոցիալական աշխատանքի սկզբունքները, սոցիալական աշխատանքի շրջանակներում իրականացվող միջոցառումները, սոցիալական աշխատանքի մասնագետների իրավունքները, պարտականություններն ու գործունեության երաշխիքները, ինչպես նաև սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման, վերապատրաստման, սուպերվիզիայի

իրականացման հետ կապված հարաբերությունները: Օրենքի նախագծի առաքելությանն անդրադառնալով՝ նշել է, որ սոցիալական աշխատանքը բառակապակցություն չէ, այլ գիտություն ու մասնագիտություն, և սոցիալական աշխատողը ոչ թե բարի ու կրթված մարդն է, այլ պրոֆեսիոնալ մասնագետ, ում կայացրած որոշումները վերաբերում են մարդու ճակատագրին:

Բանախոսը ներկայացրել է նաև, որ Հայաստանում սոցիալական աշխատանքով զբաղվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր օղակներ՝ սոցիալական աջակցության տարածքային մարմիններ, կրթական և բժշկական տարբեր հաստատություններ, ինչպես նաև հանրապետությունում ներդրված պրոբացիոն ծառայությունը: Հավելել է, որ «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի Նախագծով տրված են հասկացություններ, սկզբունքներ, նպատակներ, որոնք զուգահեռվում են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանված հասկացություններին, սկզբունքներին և նպատակներին: Տեղեկացրել է, որ Սոցիալական աշխատանքի մասնագետներն են սոցիալական աշխատողն ու սոցիալական սատարողը, ընդ որում սոցիալական աշխատողի մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ունի «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող, հայերենին տիրապետող և սոցիալական աշխատողի հավաստագիր ունեցող գործունակ ֆիզիկական անձը: Սոցիալական սատարողի մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ունի «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ միջին կամ նախնական կրթություն ունեցող, հայերենին տիրապետող և սոցիալական սատարողի հավաստագիր ունեցող գործունակ ֆիզիկական անձը: Ավելացրել է, որ Նախագծում հստակ ներառվել է «Սոցիալական աշխատանքի չափորոշիչներ» հասկացությունը, որը «սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ մասնագիտական կրթությանը, սոցիալական աշխատանքի մասնագետների պրակտիկային, սոցիալական աշխատանքի սուպերվիզիային առաջադրվող պահանջների, վարքագծի միասնական կանոնների և սոցիալական աշխատանքի էթիկայի սկզբունքների, դրանց խախտման դեպքում կիրառվող ընթացակարգերը նկարագրող դրույթների ամբողջությունն է: Սոցիալական աշխատանքի չափորոշիչները մշակում և լիազորված պետական մարմնին է ներկայացնում պատասխանատու կազմակերպությունը, որը Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհրդում հատուկ խորհրդատվական կարգավիճակ ունեցող, Աշխատանքի միջազգային կազմակերպությանը, Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամում, Եվրախորհրդում և Եվրամիությունում հավատարմագրված սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիային անդամագրված սոցիալական աշխատողների հասարակական միավորումն է:

Միաժամանակ նշել է, որ ՀՀ կառավարությունը պատասխանատու կազմակերպությանը վերապահված լիազորությունների իրականացման իրավունքը տալիս է հինգ տարի ժամկետով, իսկ պահանջին բավարարող կազմակերպություն չլինելու դեպքում՝ սահմանում է պատասխանատու կազմակերպություն ընտրելու չափորոշիչներն ու կարգը: Պատասխանատու կազմակերպությանը սույն օրենքով սահմանված կարգով տրվում է որոշակի լիազորությունների շրջանակ, նպատակներ, խնդիրներ՝ սոցիալական աշխատանքի ստանդարտների մշակման և հաստատման համար: Օրենքի Նախագծի ընդունումով այդ ստանդարտները պարտադիր կիրառելի պետք է լինեն հնարավոր բոլոր այլ ոլորտներում գործող սոցիալական աշխատողների համար: Ներկայումս վեց տարբեր ԲՈՒՀ-եր արդեն իրականացնում են սոցիալական աշխատողների պատրաստման մասնագիտական դասընթացներ: Տիկին Մինասյանը նշել է, որ վերոնշյալ ԲՈՒՀ-երից ծանոթ է միայն ԵՊՀ-ի սոցիալական աշխատանքի մասնագիտական չափորոշիչներին և

որոշ չափով Խ. Աբովյանի անվան Երևանի մանկավարժական համալսարանի սոցիալական աշխատանքի մասնագիտական չափորոշիչներին: Մնացած չորս ԲՈՒՀ-երի դեպքում տեղեկացված չէ: Օրենքն ընդունելու դեպքում սոցիալական աշխատանքի ստանդարտները կդառնան պարտադիր այդ բոլոր ԲՈՒՀ-երի համար, որի արդյունքում կունենանք նույն մեթոդաբանությամբ, ձևաչափով, մասնագիտական վարքագծի միասնական պահանջներ ունեցող պրոֆեսիոնալ սոցիալական աշխատողներ:

Ըստ բանախոսի՝ սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովը կազմավորվում է սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման քննությունները կազմակերպելու և դրանց արդյունքներն ամփոփելու նպատակով և բոլոր աշխատանքների թափանցիկության մեխանիզմների հնարավոր կիրառմամբ: Վերջինս կազմավորվում է երեք տարի ժամկետով՝ ինն անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ՝

- երեք անդամ՝ թեկնածությունները ներկայացնում է պատասխանատու կազմակերպությունը,
- չորս անդամ՝ թեկնածությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության գիտական և (կամ) բարձրագույն ուսումնական հաստատությունները,
- երկու անդամ՝ ներկայացնում է լիազորած պետական մարմինը:

Նախագծի ընդունմամբ անհրաժեշտ հիմքեր են ստեղծվելու սոցիալական աշխատանքի կայացման և պրոֆեսիոնալ աշխատակազմի ձևավորման համար, ինչպես նաև փոփոխություններ են լինելու «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում:

Օրակարգի երկրորդ հարցի ներկայացումից հետո ևս Խորհրդի անդամների կողմից հնչել են տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

Խորհրդի անդամ Սուսաննա Թադևոսյանը մտահոգություն է հայտնել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք սոցիալական աշխատանքը և միջազգային սահմանումները այս օրենքի Նախագծի կիրառմամբ չեն սահմանափակվել և օրենքը սոցիալական աշխատողի իրավունքներով ու պարտականություններով չի ծանրաբեռնվել, միաժամանակ առաջարկել է սոցիալական աշխատողի իրավունքներն ու պարտականությունները ամրագրել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված պաշտոնի անձնագրերով:

Հարցին ի պատասխան Աստղիկ Մինասյանը նշել է, որ սոցիալական աշխատողի իրավունքներն ու պարտականությունները պետք է սահմանվեն միայն օրենքով և Նախագծում ներառված են հիմնական իրավունքների և պարտականությունների շրջանակը: Միջազգային ստանդարտներին անդրադառնալով՝ տիկին Մինասյանը նշել է, որ հավատարմագրված կազմակերպություն ասելով ի նկատի են ունեցել այն կազմակերպությունը, որը ծանոթ է միջազգային փորձին և կարող է բերել նրանց լավագույն փորձը և մշակել միմիայն հայաստանյան փորձից ելնելով: Տիկին Թադևոսյանը ընդգծել է, որ շատ ավելի լայն հասկացություն է սոցիալական աշխատանքը, սակայն այս օրենքը այն բավականին սահմանափակում է:

Տիկին Թադևոսյանի հարցադրմանն ի պատասխան տիկին Անտոնյանը հավելել է, որ սոցիալական աշխատանքը սոցիալական արդարության ու մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների վրա հիմնված մասնագիտական գործունեություն է ուղղված անձի, ընտանիքի, խմբերի կենսական պահանջմունքների բավարարմանը, ինչպես նաև համայնքների սոցիալական պատասխանատվության մեծացմանը և սոցիալական պլանավորմանը, միաժամանակ նշել, որ սոցիալական աշխատողը տիրապետում է շահառուի

սոցիալական իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն առնչվող ՀՀ օրենսդրությանը, նրա սոցիալական կարիքների գնահատման, այդ կարիքների բավարարմանն ուղղված անհատական սոցիալական ծրագրերի կազմման մեթոդներին ու տեխնիկային, առկա ռեսուրսների և հնարավորությունների մասին տեղեկատվությանը, ունի սոցիալական աշխատանքի տեսական և պրակտիկ գիտելիքներ:

«Արազա» ԲՀԿ-ի նախագահ Թամարա Աբրահամյանը պատասխանատու կազմակերպության ստեղծմանն անդրադառնալով՝ նշել է, որ դատելով կազմակերպության համար սահմանված չափորոշիչներից, ակնհայտ է դառնում, որ այդ կազմակերպությունը դիտարկվում է Սոցիալական աշխատողների ասոցացիան, ուստի նրա կարծիքով անհրաժեշտ է միանգամից ամրագրել այդ փաստը, եթե նման իրավասության սահմանումը չի ենթադրում ոլորտում մրցակցային դաշտ երաշխավորելու նպատակ: Հարցին ի պատասխան տիկին Մինասյանը նշել է, որ միջազգային սոցիալական ասոցացիան ունի սանկցիաներ, որոնք կիրառվում են սխալ գործողությունների ընթացքում:

Խորհրդի Նախագահը ընդգծել է, որ ներկայացված գործընթացում կարևոր է հստակեցնել այն հանգամանքը, թե միջազգային կառույցի անդամ դառնալու համար ինչ պայմաններ և չափանիշներ են անհրաժեշտ: Հնարավոր ռիսկերը հաշվի առնելով և գնահատելով՝ անհրաժեշտ է քաղաքականություն մշակել, գնալ այնպիսի ճանապարհով, որ որակական շատ երևույթներ, որոնք ռիսկային են պետության տեսլականի համար այս ամբողջ ինստիտուտի կայացման գործում, չտուժեն և ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք մրցակցությունից զատ կպաշտպանեն սոցիալական պաշտպանության ոլորտը:

Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովի անդամների թվին անդրադառնալով՝ **Թամարա Աբրահամյանը** մտահոգվել է, որ հանձնաժողովի անդամները բաղկացած են ինն անդամից, որից չորս անդամի թեկնածությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության գիտական և (կամ) բարձրագույն ուսումնական հաստատությունները, առանց շեշտելու համապատասխան մասնագիտություն դասավանդելու հանգամանքը: Ինը հոգանոց հանձնաժողովի նիստը վավեր ճանաչելու համար չորս անդամի մասնակցությամբ ճանաչվել է քվորումի ապահովման բավարար պայման, մինչդեռ անգամ պարզ մեծամասնության հանգամանքն այս պարագայում բացակայում է: Հարցին ի պատասխան Աստղիկ Մինասյանը նշել է, որ Նախագծում չորս թիվը փոխարինվել է հինգ թվով, ինչ վերաբերվում է մասնագիտացված ԲՈՒՀ-երի ընտրությանը, ապա այդ խմբագրական հարցն ևս հաշվի կառնվի: Տիկին Աբրահամյանը մատնանշել է նաև սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովի նիստերի անցակացման գործընթացը և անհրաժեշտություն է համարել Նախագծում հղում կատարել նիստերի անցկացման հստակ պարբերականության սահմանմանը:

Հրավիրված անձ Կարինե Հարությունյանն առաջարկել է հանձնաժողովի կազմում ընդգրկել հասարակական կազմակերպության ներկայացուցիչներին:

Բանախոս Աստղիկ Մինասյանի կողմից ներկայացված 4 ԲՈՒՀ-երում սոցիալական աշխատողների ուսուցման դասընթացներին տեղյակ չլինելու խնդրին անդրադառնալով՝ Նախագահն առաջարկել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն հարցում իրականացնել՝ պարզելու, թե որ ԲՈՒՀ-երն են կազմակերպում սոցիալական աշխատողների ուսուցման դասընթացները և վերջիններիս առաջարկել իրենց կրթական ծրագրերում ներառել Նախարարության մոտեցումները: Ի պատասխան առաջարկին՝

Աստղիկ Մինասյանը նշել է, որ օրենքի նախագիծը նորից լրամշակվելու է, նոր տարբերակում կներառվեն նաև նախագծի վերաբերյալ ԲՈՒՀ-երից ստացված առաջարկները:

Այնուհետև խորհրդի անդամ Սուսաննա Թադևոսյանն անդրադարձել է սոցիալական սատարող հասկացությանը և նշել, որ վերոնշյալ պարագայում հրատապ խնդիր է առաջանում հաշմանդություն ունեցող անձանց սոցիալական ներառման համար սոցիալական օգնականի կամ անձնական օգնականի ինստիտուտի ներդրման գաղափարի անհրաժեշտությունը: Հարցին ի պատասխան՝ տիկին Մինասյանը ընդգծել է, որ նախկինում միջին մասնագիտական կրթությամբ սոցիալական աշխատողը կոչվում էր սոցիալական սպասարկող, սակայն «սպասարկող» բառը շատ հակասությունների տեղիք էր տալիս, ընդհուպ այն աստիճան, որ սոցիալական սպասարկողը և վարսավիրը տուն-ինտերնատում ընդգրկվում էին նույն խմբում: Այս տեսանկյունից «սպասարկող» բառի հետ կապված մեծ խնդիր էր առաջանում: Նա նշել է, որ Նախագծով սահմանված են սոցիալական սպասարկողի իրավունքները և պարտականությունները:

Միրա Անտոնյանն իր հերթին առաջարկել է Նախագծի անցումային դրույթների փոխոխության հետ կապված սոցիալական աշխատողների մասնագիտական գիտելիքների կատարելագործման ուղղությամբ կազմակերպել հատուկ դասընթացներ, Նախագծում նշված հավաստագրման քննություն հանձնելու ժամկետը կրճատել, քանի որ մինչև 2022թ. երկարաձգելը կնպաստի սոցիալական աշխատանքի գործընթացի բարդացմանը, ինչպես նաև խստացնել քննություն հանձնելու պայմանները:

Հրավիրված անձ Կարինե Հովհանիսիսյանը բարձրաձայնել է նաև Գյումրի քաղաքում առկա տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման խնդիրը, որին ի պատասխան նախարարի տեղակալ Զարուհի Բաթոյանը նշել է, որ այդ խնդրի լուծման համար շատ կարևոր է գտնել գործընկերներ, բայց հիմնական խնդիրը կայանում է նրանում, թե համակարգային և առարկայական ինչ լուծումներ կարող է նախարարությունն առաջարկել, այսինքն՝ դեպք վարողը, սոցիալական աշխատողը, սոցիալական ինստիտուտն ինչքանով են տիրապետում և տեղեկացված համայնքի բնակիչների կարիքներին, առկա խնդիրներին և դրանց լուծման ուղղություններին: Ընդգծել է նաև, որ առկա է հասարարական կազմակերպության հետ համագործակցության համակարգման խնդիր, որն անհրաժեշտ է կանոնակարգել և հստակեցնել:

«Աշխատանքի իրավունքի պաշտպանի գրասենյակ» ՀԿ-ի ղեկավար Արթուր Սարգսյանն անդրադառնալով Նախագծի կառուցվածքին՝ առաջարկել է Նախագծի 7-րդ հոդվածի 6-ից 18-րդ կետերը տեղափոխել Նախագծի 2-րդ հոդված, Նախագծի 14-րդ կետում նշված «մասնագիտական այրման» արտահայտությունը վերանայել:

Երկրորդ հարցի քննարկումից հետո Խորհրդի Նախագահը նախարարի տեղակալներին հանձնարարել է ներկայացված նախագծերի շուրջ կազմակերպել ավելի խորքային ու առարկայական քննարկումներ, իսկ խորհրդի անդամներին հորդորել գրավոր ներկայացնել իրենց առաջարկությունները, որոնք անհրաժեշտության դեպքում կներառվեն փաստաթղթերում:

Նախագահողն օրակարգի 1-ին և 2-րդ հարցերի վերաբերյալ առաջարկել է հաշվի առնելով նիստի ընթացքում հնչեցված առաջարկությունները լրամշակել նախագծերը և ապահովել դրանց հետագա ընթացքը:

Այնուհետև, Նախագահը ժամանակի սղության պատճառով ներկաներին առաջարկել է Օրակարգի 3-րդ հարցը՝ «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացումը տեղափոխել Խորհրդի հաջորդ հանդիպմանը:

Նախագահի առաջարկն ընդունվել է միաձայն:

Խորհրդի նիստում քննարկվել է նաև «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության կողմից ներկայացրած նախարարին կից հասարակական խորհրդի նիստի առցանց հեռարձակման ձևաչափի առաջարկը և պայմանավորվածություն է ձեռք բերվել անհրաժեշտ նյութական և տեխնիկական պայմանների առկայության դեպքում իրականացնել դրա փորձարկումը:

Խորհրդի անդամ Գրիգորի Գրիգորյանցն առաջարկել է ներկայացնել սոցիալական ծառայությունների անձնագրերի մշակման գործընթացը: Խորհրդի Նախագահ Մանե Թանդիլյանն առաջարկին ի պատասխան հանձնարարել է խորքային քննարկում իրականացնելու նպատակով գումարել առանձին նիստ:

Ամփոփելով նիստի աշխատանքները՝ Նախագահը ևս մեկ անգամ կոչ է արել խորհրդի անդամներին ցուցաբերել ակտիվություն, բարձրաձայնել ոլորտին վերաբերող ցանկացած հարց և խնդիր, քանի որ նախարարությունը շահագրգիռ է, որպեսզի առկա խնդիրներին լուծումներ տրվեն պետություն-հասարակություն ակտիվ համագործակցության արդյունքում:

Նիստի ավարտին որոշում է կայացվել կազմել արձանագրություն և Խորհրդի անդամների հետ համաձայնեցնելով այն ներկայացնել ստորագրման:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ԹԱՆԴԻԼՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝ **Զ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ**